Դուշմանս ալ երեսս ելաւ, «Ո՞ւր կ’երթաս, ան քու մարդը չէ»:
Թուլցաւ շապէնն ի բազկի, թափեցաւ նըռան հատ գինիս:
– Դուշմա՛ն, աչքըդ կո՛յր կենայ, նենգաւոր լեզուդ չորանա՛յ.
Մէյ մ’ալ դուշմանս որ տեսնամ, տի հանեմ չախուեկս ի ճէպէս,
Չախուեկս ի ճէպէս հանեմ, տի մորթեմ սեւ ոչխըրի պէս,
Արիւնը գատէին առնեմ, տի խըմեմ անպակ գինու պէս,
Մըսիկն ալ քաբաբ տ’ընեմ, տի ուտեմ կաքւու մըսի պէս:

****

Լուսիկ բոլորեր եկեր, – Ես ի քու խարիպդ ի նըման:
– Խըպնէ՛ ’ւ ամըչնէ՛, լուսի՛կ, ո՞ր տեղդ իմ խարիպիս նըման.
Խարիպըս թուխ աչք ունէր, թուխ ուներ ու շուշման բերան.
Շըրթունք շուրթեղէն ունէր՝ սըրմա թել պեխերն ի վըրան:

****

Լուսիկ մի փըրթաւ քարէն, կէսն է խոռ ու կէսն է բոլոր.
Քիչ քիչ ալ ի վեր եկաւ, բոլորեր զըն նոր թագաւոր:
Լուսի՛կ, դու լուսով կենաս, թէ կենաս պահիկ մը հուտա.
Երկու խօսք գանգատ ունիմ, այն գանկտիմ, դուն ալվա գընա՛:
Գընա՛ խարիպիս ըսէ՛, չիկենայ ու ելլէ ու գայ:
–Խօսկունքդ ի գըլխուս վըրայ, չիգիտեմ դուռը խարիպիդ:
– Եկո՛ւր նըշանով ցոյց տամ, որ գըտնես դուռը խարիպիս.
ԻՄ եարն է Շէքէր – Խանին, նուշ դըրեր՝ շէքէր կու ծախէ.
Աչուին թերազու արեր, ուներո՛վը վեր կու քաշէ.
Էմմէնուն աժան աժան, իս տեսեր նը սուղ կու ծախէ:

****

Լուսիկ մի փըրթաւ քարէն, կէսն է խոռ ու կէսն է բոլոր.
Քիչ քիչ ալ ի վեր եկաւ, բոլորեր զըն նոր թագաւոր.
Լուսի՛կ, դու կամաց կամաց խառղ եղիր մեր տան ի վըրայ.
Երկու խօսքն գանգատ ունիմ, ան գանկտիմ, դուն ալվա գընա՛.
Գընա՛ խարիպիս ըսէ՛, չիկենայ, թող ելլէ ու գայ:
– Բարեւդ ի գըլխուս վըրայ, չիգիտեմ դուռը խարիպիդ:
– Եկուր նըշանով ցոյց տամ, բարձրը պատ ու ծառ շըքերուն:
Նըստեր է ծառին շըքին, խատումատ խատէին ի ափին:
Խատէին որ ափիդ ունիս, կա՛մ, խըմէ կա՛մ տո՛ւր խըմողին.
Ան սազն որ կէօքսիդ ունիս, կա՛մ չալէ կա՛մ տուր չալողին: